


ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ

ԱՐՎԵՍՏԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՀԵՆՐԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ԿԵՆՍԱՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ



ՀԵՆՐԻԿ ԳՈՎՋԱՆՆԻՍՅԱՆ
Սիրիուսի թատրոնում (Սիրիա)

НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

ИНСТИТУТ ИСКУССТВ

БИБЛИОГРАФИЯ АРМЯНСКИХ ИСКУССТВОВЕДОВ

№ 3

ГЕНРИХ ОГАНЕСЯН

ЕРЕВАН 2006

NATIONAL ACADEMY OF SCIENCES
OF THE REPUBLIC OF ARMENIA

INSTITUTE OF ARTS

BIOBIBLIOGRAPHY OF ARMENIAN ART CRITICS

№ 3

HENRIK HOVHANNISSIAN

YEREVAN 2006

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ

ԱՐԿԵՍՏԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՀԱՅ ԱՐԿԵՍՏԱԲԱՆՆԵՐԻ ԿԵՆՍԱՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ
N° 3

ՀԵՆՐԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Ներածականը եւ մատենագիտությունը՝
արվեստագիտության թեկնածու
ԱՐԱ ԽԶՄԱԼՅԱՆԻ

Մատենագիտությունը կազմել է
արվեստագիտության թեկնածու
ԱՐԱ ԽԶՄԱԼՅԱՆԸ

Պատասխանատու խմբագիր՝
արվեստագիտության թեկնածու
ԱՆՆԱ ԱՍԱՏՐՅԱՆ

Հենրիկ Հովհաննիսյան. Կենսամատենագիտություն
/կազմ. Ա.Խզմայան/: Երևան, 2006, 48 էջ:

Մատենագիտությունն ընդգրկում է արվեստագիտության ղոկտոր, պրոֆեսոր, ՀՀ գիտության վաստակավոր գործիչ Հ.Հովհաննիսյանի 1963-2006թթ. տպագիր աշխատությունների, գիտական հոդվածների, զեկուցումների, թատերախոսականների եւ հարցազրույցների ցանկը՝ գիտնականի գործունեությունը բնութագրող ներածականով:

ՀԵՆՐԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Թատերագիտությունը երիտասարդ գիտություն է՝ կազմավորվել է անցյալ դարի առաջին երկու տասնամյակներում եւ, որպէս գրականագիտությունից անկախ բնագավառ, գիտակցվել է համեմատաբար ուշ: Այստեղ որոշակի է քննադատության եւ թատերական բելետրիստիկայի դիրքը լրագրության ու թատերասիրության ընդհանուր մթնոլորտում: Ինչպէս նկատել է Հենրիկ Հովհաննիսյանը, դա թատերագիտության էստրադան է՝ գիտությանը հրում տվող կենդանի խոսակցություն¹: Պատմությունն ու տեսությունը, սակայն, առանձնանում են թատերասիրական հանրամատչելի զրույցներից, եւ Հովհաննիսյանի բուն գործունեությունն ու վաստակն այս ոլորտում են:

Հենրիկ Հովհաննիսյանը թատերագետների երրորդ սերնդի ներկայացուցիչն է մեր իրականության մեջ. սկսել է տպագրվել 60-ական թվականներից: Նա տարբերվում է նախորդներից իր մասնագիտական բնավորությամբ ու խառնվածքով, նաեւ գիտական կողմնորոշումներով ու յուրահատուկ դիրքով թատրոնի պատմության հանդէպ: Նա տարբեր առիթներով հիշեցնում է, որ թատերագիտության մեջ իր ուսուցիչը թատերագետ չի եղել, այլ բեմադրիչ, եւ իր կրթությունն սկսել է բեմական արվեստի տարրական սկզբունքների գործնական յուրացումով, այնպէս, ինչպէս երաժշտագետը՝ դաշնամուրով, կերպարվեստագետը՝ վրձնով ու ներկով, եկեղեցիներ չափագրող ճարտարապետը՝ շենք նախագծելով: Բնագավառի գործնական իմացությունը Հովհաննիսյանի համար սկզբունք է, գիտական ուսումնասիրության դիմելու նախապայմանը: Այս սկզբունքով էլ նա իր ուսուցիչն է համարում հայ

¹ Տե՛ս Հ.Հովհաննիսյան, Թատրոն եւ թատերախոսություն, «Սարգիս Խաչեճյան», Ե., 2004, էջ 5:

թատրոնի ամենապրոֆեսիոնալ բեմադրիչ Արմեն Գուլակյանին, որը նորա-
բար ու մոդերնիստ էր իր գործունեության սկզբին եւ ավանդապաշտ ու
ակադեմիստ ստեղծագործական հասուն շրջանում:

Հովհաննիսյանը սովորել է Երեւանի Գեղարվեստա-թատերական ինս-
տիտուտի դերասանական ֆակուլտետում 1954-1958 թվականներին, եղել է
անվանաթոշակառու ուսանող եւ ավարտել ինստիտուտը գերազանցությամբ
վկայագրով: Առաջին մեկ տարին նա եղել է ազատ ունկնդիր (պայմանա-
կան) Վարդան Աճեմյանի դասարանում: Այստեղ է նա մոտեցել բեմական
արվեստի ինքնակեցության, այն է՝ գրականությունից անկախ գոյաձեւի
կոսմոսին, որը հետագայում դառնալու էր տեսական զննումների ելակետը:
Բեմական արվեստի բնույթի (սպեցիֆիկում) ու հիմնարար հասկացություննե-
րի ըմբռնմանը նա հասել է հաջորդ երեք տարիներին, Արմեն Գուլակյանի
դասարանում: Գուլակյանի ղեկավարությամբ է նա ըմբռնել Կոնստանտին
Ստանիսլավսկու կիրառական հոգեբանության դասընթացը, ճշտել հասկա-
ցություններն ու եզրերը, խաղացել ամբողջական դերեր, առնչվել բեմակա-
նորեն լուռ վիճակների եւ ծավալուն տեքստային նյութերի, խմբագրել պիեսի
թարգմանական տարբերակը, գրական տեքստը հարմարեցրել բեմադրական
պայմաններին, գրել ռեֆերատներ: Ինչպե՞ս է գրական նյութը վերածում բե-
մական կենդանի իրականության: Սա մի բարդ անցում է՝ մազե կամուրջ, եւ
առանց այդ կամուրջն անցնելու հնարավոր չէ պատկերացնել այն արվեստը,
որի հիմքը գրականությունն է, բայց ինքն իր կենդանի գոյաձեւով գրականու-
թյունն է: Այս անցումով է շոշափվում թատրոնը եւ գիտակցվում նրա տեսու-
թյունը, որ ինքնուրույն տեսություն է լինելու իր հասկացական ու տերմինա-
բանական համակարգով: Եվ եթե Հովհաննիսյանն իր դերասանական կր-
թությունն առավելություն է համարում, ապա միայն ու միայն այս առումով:

Գեղարվեստա-թատերական ինստիտուտն ավարտելով դրամատիկա-
կան թատրոնի դերասանի մասնագիտությամբ՝ Հովհաննիսյանը 1958-61
թվերին աշխատել է Ռադիոհաղորդումների եւ հեռուստատեսության պետա-
կան կոմիտեում որպես ռադիոհաղորդավար: Սա այն շրջանն էր, երբ եթե-
րում խոսելը ծայրագույնս պատասխանատու վիճակ էր մարդու համար, եւ
ռադիոյի հաղորդավարը (դիկտոր) առաջին դեմքն էր եթերում, որպես տոնա-
լին դրսեւորումը պաշտոնական գաղափարախոսության եւ քաղաքացիական
իդեալ ընթերցվող տեքստի անհատական եւ հասարակականորեն ընդունելի
հնչեղությամբ: Սա նաեւ հայոց լեզվի գործնական ջատագովումն էր, եւ չէր

հանդուրժվում ոչ միայն քերականորեն սխալ շեշտն ու անորամաբան տրո-
հումը, այլեւ բառի հնչյունական կազմի անլիարժեք արտաբերումը: Այս աշ-
խատանքում Հովհաննիսյանը ոչ միայն հղկել է իր խոսքի արտահայտչական
նյութունն ու տոնը, այլեւ մշակել բեմական խոսքի իր տեսությունը, որ հետա-
գայում դրսեւորվել է իր «Բեմական խոսքի պոետիկան» (1973թ.) եւ «Դերա-
սանի արվեստի բնույթը» (2004թ.) աշխատություններում:

1961-64 թվերին Հովհաննիսյանն ասպիրանտական շրջան է անցել
Հայաստանի Գիտությունների ակադեմիայի Արվեստի ինստիտուտում՝ բա-
նասեր Գառնիկ Ստեփանյանի ղեկավարությամբ, եւ խորացել է 19-րդ դա-
րի հայ թատրոնի, մասնավորապես արեւմտահայ թատրոնի ուսումնասիրու-
թյան ոլորտում: Որպես ուսումնասիրության նյութ՝ նա ընտրել է պոլսահայ
դերասանական դպրոցը եւ ֆրանսիական ու իտալական մեղոդրաման բեմա-
դրական արժեքի եւ խաղաճոհ թելադրման տեսակետից: Դրամատուրգիա-
կան նյութը դիտելով որպես ժամանակի թատերական համակարգի անդրա-
դարձ (սրոնեկցիա)՝ նա կանգ է առել այդ շրջանի խաղային ոճը հատկանշող,
մեղոդրամայի վարպետ Մարտիրոս Մանկյանի դերասանական կերպարի
վրա՝ նկատի առնելով, որ Մանկյանն ուսուցչի դեր է ունեցել եւ՝ Պետրոս
Ադամյանի, եւ՝ Վահրամ Փափազյանի կյանքում: Ժամանակի մամուլի ու
արխիվային նյութերի հիման վրա Հովհաննիսյանը վերականգնել է 19-րդ
դարի ամենաբնութագրական հայ դերասաններից մեկի կերպարը եւ նրա մի-
ջոցով բացահայտել ժամանակի թատերական մթնոլորտը, ճաշակն ու չա-
փանիշները: Նրա «Մարտիրոս Մանկյան» աշխատությունը՝ որպես թեկնա-
ծուական ատենախոսություն, պաշտպանության դրվեց 1965-ին: Սա հիմք
հանդիսացավ, որ հետագայում նա հեղինակը դառնա մոտ քառասուն հեղի-
նակային մամուլ կազմող ծավալուն աշխատության՝ «Հայ թատրոնի պատ-
մություն. 19-րդ դար» (1996թ.):

Սկսած 1965 թվից մինչ օրս՝ Հենրիկ Հովհաննիսյանի գիտական գոր-
ծունեությունն ամբողջապես կապվում է Հայաստանի Գիտությունների ակա-
դեմիայի Արվեստի ինստիտուտի հետ: Այս ընթացքում նա դասախոսել է Գե-
ղարվեստա-թատերական ինստիտուտում վեց առարկա՝ բեմական խոսք,
հայ թատրոնի պատմություն, արեւմտաեվրոպական թատրոնի պատմություն,
դրամայի տեսություն, թատերագիտության ներածություն, թատերական քն-
նադատություն, եղել է Ռադիոյի հաղորդավարական խմբի գեղարվեստա-
կան ղեկավարը (1973-1974թթ.), մի շրջան դասախոսել է Երեւանի պետա-

կան համալսարանի հասարակական մասնագիտությունների ֆակուլտետում (1976-80 թթ), Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում (1985-91 թթ.), թատերախոսականներով հանդես է եկել մամուլում, զբաղեցրել է նաև պետական պաշտոն՝ 1990-91 թվերին եղել է Հայաստանի Հանրապետության Հեռուստատեսության և ռադիոյի պետական կոմիտեի նախագահը: Այս ամենի հետ նրա հիմնական աշխատանքը եղել է Արվեստի ինստիտուտում, բուն նպատակն ու գործունեությունը՝ գիտահետազոտական: Բոլոր պայմաններում նա հավատարիմ է մնացել հետազոտող արվեստագետի իր խառնվածքին ու բնավորությանը և բոլոր խնդիրներին, նաև՝ պաշտոնական, մոտեցել է գիտական տեսակետից՝ երբեք չմոռանալով իր բուն կոչումն ու նպատակը: Միջավայրը միշտ չէ, որ ճիշտ է ըմբռնել նրա գիտական սկզբունքայնությունը, բայց դա նրան քիչ է մտահոգել: Կարելի էր նրա համար եղել է ոչ այնքան արտաքին կարծիքը, որքան իր ներքին համոզումը: Չհաճոյանալով վերադաս անձանց, անգամ ամենավերին իշխանությանը (հիշական շրջանում)՝ նա մնացել է անվրդով ու հավասարակշիռ, այն գիտակցությամբ, որ իր տեղը գիտությունն է և իր ունեցածն անկողնատեղի: Գիտության մարդու բնավորությունը նրան պահում է առույգ, կյանքի գործնական գաղափարների հանդես անտարբեր:

Հենրիկ Հովհաննիսյան հետազոտողի միտքն ընդգրկում է թատերագիտության երեք հիմնական ոլորտները՝ պատմություն, տեսություն, քննադատություն: Համակարգելով հայ թատրոնի պատմությունը նախաքրիստոնեական շրջանից ու վաղ միջնադարից մինչև 19-րդ դարի վերջը՝ նա առավելապես խորացել է միջնադարագիտական (մեդիեվիստական) թատերագիտության մեջ: Սա ուսումնասիրության առանձին ոլորտ է, որի գիտական սկզբունքների մշակողը մեզանում Հենրիկ Հովհաննիսյանն է: Հիմնվելով մատենագիտական ոչ միշտ ուղղակի վկայությունների, նաև լեզվական ստուգաբանությունների վրա՝ նա յուրահատուկ քննական վերաբերմունք է մշակել պատմությունից հեռացած և գրական անդրադարձումներից հեռու թատերական մի երևույթի հանդես, որին ասում են միջնադարյան աշխարհիկ թատրոն: Մերժելով, այսպես կոչված, «հայրենասիրական» մոտեցումը՝ նա խնդիր է դիտել է թատրոնի ընդհանուր պատմության լայն համատեքստում, նպատակ ունենալով որոշել հայոց միջնադարում «ցուցք» և «թատր» անվանումներով հայտնի երևույթի պատմական տեղն ու տիպը միջնադարյան ժողովրդական մշակույթի համակարգում: Վերանայելով նախորդ ու-

սումնասիրողների (Գ.Լեոնյան, Գ.Գոյան) տեսակետը թատրոն-եկեղեցի հարաբերության խնդրում՝ Հովհաննիսյանն սկզբից իսկ հրաժարվել է եկեղեցու թատրոնամետ դիրքը և հակաթատրոնական ճառերը (Հովհան Մայրավանցի, Սիմեոն Եպիսկոպոս) հետադիմական շարժում որակելու կոպիտ ու մակերեսային մոտեցումից: Այս խնդիրն նա մոտեցել է պատմականորեն՝ հիմնավորելով հասարակական հաղորդակցման երկու տարբեր համակարգերի հակասությունը, գիտականորեն մեկնաբանելով այս երևույթի կրոնա-գաղափարական ու աշխարհայացքային պատճառները, ինչպես նաև ցույց տալով անտիկ թատերական համակարգի պատմական անհամատեղելիությունը վաղ միջնադարում և հետագայում: Այս հարցադրումները հանգեցրել են մեկնաբանության, որը հրապարակվել է «Թատրոնը միջնադարյան Հայաստանում. պատմության և տեսության հարցեր» խորագրով (1978թ.): Այս աշխատության համար Հենրիկ Հովհաննիսյանին շնորհվել է արվեստագիտության դոկտորի գիտական աստիճան (1979թ.):

Միջնադարյան թատրոնի ուսումնասիրությունը թատերագետին դուրս է բերել նեղ թատերագիտության ասպարեզից, մղել ընդհանուր միջնադարագիտության և հայագիտության ոլորտները: Նա գիտաժողովներում (տեղական և միջազգային) զեկուցումներ է կարդացել տարբեր թեմաներով. Դավիթ Անհաղթի Էսթետիկական կողմնորոշման, անտիկ դրամայի քրիստոնեական փոխակերպման (մետամորֆոզ), Լուսավորչի վկայաբանության միջոցառման պայմանաձեռի և այլ հարցերի մասին: Այս շարքում առանձնանում է «Դավիթ Անհաղթի Էսթետիկական կողմնորոշման մասին» զեկուցումը, որ կարդացվել է 1980 թվին, Դավիթ Անհաղթի 1500-ամյակին նվիրված երեսնյան միջազգային գիտաժողովում: Հեղինակը փորձել է պարզել գեղարվեստական զբաղմունքները միասնական եզրում ընդհանրացնող կարգ բառի իմաստային շերտերը և ըստ այդմ մոտենալ արվեստի անտիկ և վաղ միջնադարյան ըմբռումներին²:

Միջնադարյան թատրոնի ուսումնասիրությունը Հովհաննիսյանին տրամաբանորեն հանգեցրել է այդ երևույթի բնաշխարհիկ, հետեաբար և հնագույն հիմքերի որոնմանը: Նրա «Հայ հին դրաման և նրա պայմանաձեռերը» աշխատությունում (1990թ.) բացահայտվում են շրջայվածի միջազգային առասպելի այնպիսի շերտեր, որոնք մոտեցնում են հնագույն խորհրդապաշ-

² Տե՛ս "Философия Давида Непобедимого" (сб.), изд. "Наука", М., 1984, с. 207-213:

տական դրամայի (սիդերական միստերիա) գաղափարին եւ նրա գլխավոր գործող անձի՝ Օիդարի առեղծվածին: Չխուսափելով հարցադրումների թեականությունից, երբեմն կանգնելով հարցականների առջեւ՝ հեղինակը դրամատիկական մտածողության հիմքում տեսնում է երեք պայմանաձեւ՝ առասպելաբանական, ծիսային եւ խաղային: Դրաման անցնում է այս երեքի միջով, դրսևորվում տարբեր նշաններով եւ նոր ժամանակներին փոխանցվում ժողովրդական դատական խաղերի տեսքով: Սա որոնողական աշխատանք է՝ ճանապարհ բազում հարցականներով, որոնցից չի խուսափում հեղինակը եւ արահետներ է գծում դեպի դրամայի պատմական խորքը:

Այս աշխատության երեք գլուխներն առանձին-առանձին ենթադրում են մի ընթացք, որ հանգեցնելու է շարունակության: Այդ շարունակությունն է Հովհաննիսյանի «Միջնադարյան բեմ» աշխատությունը (2004թ.): Քրիստոնեական պատարագի պատմական հիմքերում հեղինակը տեսնում է անտիկ դրաման: Իր այս դրույթը նա հաստատում է ոչ միայն տեքստի բովանդակային-կառուցվածքային հատկանիշների քննությամբ, այլև պատմական պատճառների բացահայտումով, այն է՝ առաջին քրիստոնյաների մարտիրոսությունը անտիկ թատերահրապարակներում (օրխեստրա) եւ միմական թատրոնի՝ քրիստոնեաբար նահատակված դերասանների (Արդալիոն, Գենեգիոս, Պորփյուրոս, Բլանդինա) սրբացումը: Այնուհետև հեղինակը զննում է մի պրոցես, որ անծանոթ է թատրոնի պատմաբաններին առհասարակ: Դա միջնադարյան դպրոցական ճարտասանության այն արահետն է, որով անցել է անտիկ դրաման՝ որպես ճարտասանության ու բարոյա-գեղագիտական մեկնությունների նյութ, եւ առաջավորասիական միջավայրից հասել լատինա-կելտա-գերմանական արեմուտք: Նա գիտական շրջանառության է մղում դրամայի եւ թատրոնի պատմաբաններին անծանոթ փաստեր՝ Դիոնիսիոս Թրակացու «Քերականական արվեստի» ոչ միայն հայ, այլև հույն-բյուզանդական մեկնությունները, դրանց կողքին՝ բացատիկ գրական մի փաստաթուղթ՝ Թեոն Ալեքսանդրացու «Յաղագս ճարտասանական կրթութեան» երկի (1-ին դար) 13-րդ պարագրաֆը, ուր նկարագրվում է հելլենիստ դրբերգակ Պավլոսի ճատորալիստական խաղը: Այս հատվածը՝ երկու էջ, հայտնի է միայն հայերեն թարգմանությամբ³: Վաղուց հրապարակված է եւ չի դիտվել թատրոնի պատմության համատեքստում: Հովհաննիսյանի ուսումնասի-

³ Տե՛ս Թէոփնէայ Յաղագս ճարտասանական կրթութեանց, աշխ. Հ. Մանանդյանի, Ե., 1938, էջ 175-176:

րությունը պարզում է, որ եվրոպական իրականության մեջ 15-17-րդ դարերի երեսույթ համարվող եկեղեցա-դպրոցական դրաման իր պատմական հիմքերում շատ հին է՝ գալիս է 5-րդ դարի բյուզանդական հոետորական դպրոցներից, որ նույն շրջանի հայոց վարդապետարաններում կիրառված ճարտասանական ձեռնարկները, մասնավորապես Ափթոնիոսի «Նախակրթությունները» («Պիտոյից գիրք») հասել են մինչև Ստրատֆորդի «Քերականական դպրոցի» աշակերտ Վիլյամ Օեքսպիրին եւ հիմք դարձել դերասանական արվեստի այն ըմբռնմանը, որ արտահայտված է նրա «Համլետում»՝ գլխավոր հերոսի դատողություններում: Սա հայտնություն է պատմական թատերագիտության մեջ եւ այդ հայտնությունը պատկանում է Հենրիկ Հովհաննիսյանին: Նրա եզրակացությունն ինչ-որ մեկ պատահական փաստի վրա չէ հիմնված: Հովհաննիսյանը ցույց է տալիս երեսույթի պատմական տրամաբանությունը, վկայաբերելով իտալական «ուսումնական կատակերգության» («կոմեդիա էրուդիտե») եւ միջնադարյան ռեդերայկերների՝ ընթերցող դպիրների ճարտասանական խորանը (կամերա-օրատորում), որ ուշ միջնադարում վերածում է հրապարակային թատրոնի: Այս համատեքստում Հովհաննիսյանը նոր բացատրություն է տալիս Լվովի կաթոլիկական դպրոցի ներկայացումներին (1668թ.) եւ Վենետիկի Միսիթարյանների թատերագրությանն ու բեմադրություններին (1730-ից)՝ համարելով դրանք արեմտաեվրոպական ուշ միջնադարյան դպրոցական դրամայի դրսևորումը հայոց լեզվով:

Հովհաննիսյանի միջնադարագիտական-թատերագիտական աշխատություններով ոչ միայն «գիտական հիմքերի վրա է դրվում հայ միջնադարյան թատրոնի ուսումնասիրությունը»⁴, այլև ամբողջանում է հայագիտության մի բնագավառ: Հետագա ուսումնասիրողները, որոնցից մեծ ջանքեր են պահանջվելու նոր խոսք ասելու համար, հետեւելու են Հովհաննիսյանի մշակած հետազոտական եղանակներին եւ, ցանկանան թե ոչ, հենվելու են նրա դրույթների վրա:

Այլ բնույթի է Հովհաննիսյանի «Հայ թատրոնի պատմություն. 19-րդ դար» աշխատությունը: Ելնելով փաստագիտական ավարտուն հիմքից (Բաբկեն Հարությունյանի կազմած տարեգրությունը) եւ եղած էմպիրիկ բնույթի ուսումնասիրություններից (Վահրամ Թերզիբաշյանի եւ Գառնիկ Ստեփա-

⁴ Հայկական համառոտ հանրագիտարան, «Հայկական հանրագիտարանի գլխավոր խմբագրություն», Ե., 1999, հ. 3, էջ 397:

նյանի աշխատությունները՝ Հովհաննիսյանն ամբողջացնում է տեսականորեն հիմնավորում է 19-րդ դարի հայ դրամատիկական թատրոնի և թատերագրության պատմությունը: Արեւմտահայ և արեւելահայ թատրոններն այստեղ ներկայանում են հայոց նոր պատմության ամբողջական համատեքստում: Թատրոնը դիտվում է իր հասարակական և գեղարվեստա-մշակութային դերերի միասնության մեջ, որպես ժողովրդի հոգեւոր կենսաձեւը, ազգային և քաղաքացիական կյանքի խորհրդանիշը: Այստեղ մանրամասնորեն վերլուծվում են ժամանակի բեմական գրականությունը, դերասանական արվեստը՝ առանձին դիմանկարների ձեւով, և թատերագիտական միտքը: Հեղինակը գտնում է 19-րդ դարի երկրորդ կեսի բեմական ուղղությունը բնութագրող ձեւակերպումը՝ տրանսցենդենտալ ռեալիզմ, և այս տեսակետից է քննում Պետրոս Ադամյանի արվեստը բնութագրող քննադատական նյութը: Թատերագրության և թատրոնի հարաբերության հարցը նույնպես նորովի է բացատրում հեղինակը: Թատերագրությունը նա համարում է ժամանակի թատերական համակարգի գրական անդրադարձը, որը և գաղտնիքն է 19-րդ դարի թատրոնի ներդաշնակության:

Հենրիկ Հովհաննիսյանի թատերագիտական ժառանգության մեջ առանձին տեղ է զբաղեցնում քննադատությունը, որը նա համարում է իր գործունեության ֆակուլտատիվ դրսեւորումը: Քառասունհինգ տարվա ընթացքում նրա գրած թատերախոսականների թիվը հազիվ հասնում է հիսունի: Քննադատի համար դա թերեւս շատ է: Խնդիրն այն է, որ Հովհաննիսյանը քննադատությանը չի մոտեցել թատերական լրագրության չափանիշներով և չի արձագանքել թատերական կյանքի բոլոր դրսեւորումներին: Նա գրել է, երբ ներկայացումն իրեն միտք է տվել՝ տեսական եզրակացության առիթ: Ծարքային արժեքի երեսույթներին նա չի անդրադարձել: Գրել է, երբ ներկայացումը հիացրել է նրան կամ զայրացրել: Այս վերջին դեպքում նա բառացիորեն ծաղրել է ու ոչնչացրել և ստեղծել մեզանում մի ժանր, որին ասում են թատերական ֆելիտոն: Նման թատերախոսականները, սակայն, փոքր թիվ են կազմում. քառասունհինգ տարում ինը ֆելիտոն: Եվ այս փոքր թիվը կարծիք է ստեղծել, որ Հովհաննիսյանը մի սեականցավոր մարդ է, ոչինչ չսիրող ու չզննահատող: Այսպես մտածողները մոռանում են, որ նա չի շրջանցել որեւէ ճշմարիտ արժեք՝ սկսած 60-ական թվականներից մինչ օրս:

Թատերական քննադատության մեջ Հովհաննիսյանի ուշադրության գլխավոր օբյեկտը դերասանն է եղել՝ թատրոնի սպեցիֆիկումի կողմը: Բեմա-

դրական «գլուտերը» նրան չեն հիացրել, և ռեժիսուրա ասվածը նա ընդունել է որպես կարգավորող միջոց, բեմական փոխհարաբերությունների կառուցման արվեստ: Այստեղ նա հավատարիմ է մնացել իր ուսուցչին՝ Արմեն Գուլակյանին, որը հոգեբանական թատրոնի ջատագովն էր: Դերասանական կրթությունը և այս հավատարմությունը Հովհաննիսյանին հանգեցրել են դերասանական արվեստի հոգեբանական և էսթետիկական հիմքերի քննությանը (2004թ.): Հեղինակն այս գործը նվիրել է իր ուսուցչի հիշատակին: Նրա տեսական կոսմոսների իր ստացած գործնական կրթությունն է՝ կիրառական հոգեբանության այն դասընթացը, որ Գուլակյանը բերել էր իր ուսուցիչ Օվի Սեւումյանից և Ստանիսլավսկու տեսությունից և որի հիման վրա կառուցում էր իր ուսումնական բեմադրությունները: Հովհաննիսյանը՝ որպես այս բեմադրություններով դաստիարակված թատերագետ, բեմական գործողության հիմքում տեսնում է գրականությունից անկախ մի որակ, որը «փոքր դերն» է և անխոս վիճակը՝ դրություն ըստ գրական կոնտեքստի և բեմավիճակներում կոսմոսների: Հովհաննիսյանն այստեղ դիմում է մի խնդրի, որ առհասարակ արծարծված չէ, այլ ընդամենն ակնարկված է բեմական գործիչների դատողություններում: Դա բեմի մետաֆիզիկայի խնդիրն է: Նա բեմը դիտում է ոչ որպես խաղի ֆիզիկական տարածություն, այլ դերասանական երեւակայության ոլորտ, ուր ժամանակն ու տարածությունը սուկ ենթադրվող պայմաններ են գործող անձը կերպավորողի համար: Հովհաննիսյանը փորձում է այստեղ զարգացնել Ստանիսլավսկու գործողության տեսությունը: Նա տարրալուծում է գործողության ըմբռնումը և խաղի փոքրագույն մասնիկ է համարում ոչ թե տրամաբանական արարքը, այլ կամային նշանը: Այս հասկացությունն անծանոթ է թատրոնի տեսաբաններին և շրջանառության է մղվում Հովհաննիսյանի միջոցով: Այնուհետեւ Հովհաննիսյանը, հետեւելով Ստանիսլավսկու քննադատ Գուստավ Օպետի տեսակետին, մերժում է վերապրումի տեսությունը և պաշտպանում բեմական ներշնչման գաղափարը: Վերջինս սուկ էսթետիկական զգացմունք է, անչափ հեռու կենցաղային հույզից: Բեմական զգացմունքի բուն ելակետը Հովհաննիսյանը համարում է գրական տեքստը՝ որպես գեղարվեստորեն ավարտված իրականություն: Այսպիսով, եթե բեմում իրական է մի բան, դա պոետական ներշնչումն է, որ փոխանցվում է հանդիսականին և նրա հոգում իրականացնում թատրոնը: Հովհաննիսյանի երրորդ հանգուցային դրույթը խա-

դայն տարերքի հաստատումն է, որտեղ նա արդեն արմատապես շեղվում է եւ՝ Ստանիսլավսկուց, եւ՝ իր ուսուցչից: Նա այստեղ օգտվում է Յոհան Հայզհինգայի խաղի տեսությունից, այն է՝ գործողությունը որպես նպատակ, ներշնչման աղբյուր:

«Դերասանի արվեստի բնույթը» աշխատությունում հեղինակը վերանայել է իր՝ 1973-ին լույս տեսած «Բեմական խոսքի պոետիկայի» հարցադրումները, ճշտել ձեւակերպումներն ու օրինակները, սեղմել շարադրանքը, գրքից վերածել մեկ գլխի: Գլխավոր դրույթը, սակայն, մնացել է նույնը՝ բեմական խոսքը որպես ինքնուրույն գեղարվեստական համակարգ:

Պետք է նկատել, որ Հովհաննիսյանն իր տարբեր աշխատություններում, լինի պատմական թե տեսական, վերարժարծում է իր դրույթները, երբեմն վիճում իր հետ, ստուգում ու ճշտում նախկինում հայտնած տեսակետները: Իր ոչ մի տեսակետը նա չի համարում վերջնական ու անվիճելի եւ ճշտում է ինքը, նախքան դա կանեն իր ապագա քննադատները:

Այս վերջին տարիներին Հովհաննիսյանը խուսափում է թատերական քննադատությունից, ավելին՝ թատրոնից: Թատրոնի բովանդակային եւ հուզական աղքատացումը, ինչպես երեւում է իր 90-ական թվականների հոդվածներից ու հարցազրույցներից, նա կասում է հասարակական հողի խարխլման հետ: Սոցիալ-հասարակական կյանքի վայրիվերումներն ու ճգնաժամը նա համարում է թատրոնի՝ որպես հասարակական հաղորդակցման կենտրոնի անկման պատճառը, եւ սուբյեկտիվ գործոններին չի անդրադառնում՝ թողնելով այդ խնդիրը թատերական գործիչներին ու լրագրողներին: Թատրոնի դոններից հեռու քայլող թատերագետը թվում է կյանքից կտրված, կարիներտային մի գիտնական: Բայց դա այդպես չէ: Նա այսօր մտահոգված է թատերագիտության ապագայի խնդրով եւ չափազանց ուշադիր է երիտասարդության հանդեպ: Նա փնտրում ու գտնում է իր գործը շարունակողներին եւ ամեն առիթով կրկնում է Մաքս Վեբերի խոսքը, թե հետագոտող գիտնականը ոչինչ չի անի, եթե համոզված չլինի, որ իր գործը շարունակողներ ու իրեն գերազանցողներ կան ապագայում: Հովհաննիսյանը փնտրում է այդ մարդկանց եւ խստորեն մերժում գիտության ասպարեզը խցկվող, գիտության դիմակով գիտությունից դուրս նպատակներ հետապնդող երիտասարդներին: Ղեկավարելով Արվեստի ինստիտուտի թատերագիտության բաժինը (կազմված ընդամենը երեք հոգուց)՝ նա ծրագրում է թատերագիտական մի բառարան, որի նպատակն է հասկացությունների ու եզրերի գիտական համակար-

գումն ու մշակումը: Սա այն է, ինչ օգնելու է ճիշտ եւ համակարգված մտածողությանը՝ թատրոնի պատմության, տեսության ու քննադատության ոլորտներում: Թատերագիտությունը ճշգրիտ գիտություն չէ, բայց ճշգրիտ է մտածելու եղանակները, ճշգրտման կարիք են զգում հասկացությունները, տարբերակվելու են ի վերջո արվեստի արվեստային ու արտասարվեստային շերտերը, թատրոնում՝ բարոյա-հոգեբանական, բարոյա-հասարակական էսթետիկական շերտերը: Հովհաննիսյանն այս ըմբռնումներին է մղում իր ուսանողներին, ասպիրանտներին ու հետետղիներին, եւ դրա արդյունքներ տեսանելի են:

Այսօր Երեւանի Թատրոնի եւ կինոյի պետական ինստիտուտում դասախոսում են Հեմրիկ Հովհաննիսյանի նախկին ուսանողներն ու ասպիրանտները՝ արվեստագիտության թեկնածուներ Գրիգոր Օրդույանը, Նարինե Սարգսյանը (ֆակուլտետի դեկան), Ալլա Դանիլովան, Սոս Պետրոսյանը, Արմեն Հարությունյանը (դեկանի տեղակալ), Վասիլի Գեորգյանը (դասավանդում նաեւ պետական համալսարանում): Արվեստի ինստիտուտի թատերագիտության բաժնում են արվեստագիտության թեկնածուներ Սառա Նալբանդյան եւ Արա Խզմալյանը, ասպիրանտական շրջան է անցնում Գոռ Վանյան Գրականության եւ արվեստի թանգարանում գլխավոր ֆոնդապահ է Նաիրա Շահվալադյանը, թատրոնի եւ կինոյի ինստիտուտում ասպիրանտ է Զարուհի Արզումանյանը, եւ վերջերս իր թեկնածուական առեւնախտություն պաշտպանեց նույն ինստիտուտի ասպիրանտ Վարդան Մկրտչյանը: Այս պիսով՝ թատերագիտությունը մեզանում ապագա ունի: Երիտասարդության խնդիրը Հովհաննիսյանի գիտական նպատակներից դուրս չէ: Իր աշակերտներին նա մղում է դեպի այն խնդիրները, որոնք ինքը չի հասցրել լուծել ժամանակին: Այսօր նա յոթանասուն տարեկան է, եւ իր մտերիմները երեսունը չհասած իր աշակերտներն են: Սկսած 1995-ից նա ղեկավարում է Արվեստի ինստիտուտի գիտական աստիճանաշնորհման խորհուրդը՝ ծայրագույն մտահոգությամբ արվեստագիտության ապագայի հանդեպ:

Ելնելով կենսամատենագիտությունից օգտվելու նպատակահարմարությունից եւ նյութերն առավել ակներեւ դարձնելու ցանկությունից՝ ըստ բովանդակության եւ հիմնական ուղղվածության առանձնացրել ենք թատրոնին եւ առհասարակ արվեստին առնչվող նյութերը, զետեղել «Գիտական հոդվածներ եւ զեկուցումներ», «Քննադատություն», «Թատրոն եւ թատերական դեմքեր», «Հրապարակախոսություն» բաժիններում: Նյութերի պայպիսի խմբավորումն ինչ-որ առումով պայմանական է. «Թատրոն եւ թատերական դեմքեր» բաժնում կան քննադատությանն ու գիտականությանը միտող նյութեր, իսկ «Հրապարակախոսություն» բաժնում՝ թատրոնին հարող հոդվածներ: Նկատի ունենանք, որ հեղինակի այս բնույթի գրեթե բոլոր հոդվածներում առկա է գիտական թեզ:

Մեզ չի հաջողվել ճշտել որոշ պարբերականների, մասնավորաբար՝ «Արարի», մի քանի տարեթվեր ու էջեր: Թեական տարեթվերն առնված են սուր փակագծերի մեջ:

Պետք է ենթադրել, որ սակավաթիվ տվյալներ եւ նյութեր վրիպել են մեր ուշադրությունից: Այդուհանդերձ, սույն կենսամատենագիտությունը հնարավորություն է տալիս կազմելու ամբողջական պատկերացում Հենրիկ Հովհաննիսյանի կյանքի, գիտական եւ հասարակական գործունեության մասին:

Արվեստագիտության թեկնածու
ԱՐԱ ԽԶՄԱԼՅԱՆ

- 1936 - Ծնվել է հունիսի 3-ին, Գյումրի քաղաքում
- 1954 - Ավարտել է Երբեւանի Ա.Գրիբոյեդովի անվան թիվ 41 հայկական միջնակարգ դպրոցը
- 1958 - Ավարտել է Երբեւանի Գեղարվեստա-թատերական ինստիտուտի դերասանական ֆակուլտետը (Արմեն Գուլակյանի դասարան)՝ «Դրամատիկական թատրոնի դերասան» մասնագիտությամբ, գերազանցության դիպլոմով (Ե N°557465)
- 1958-1961 - Աշխատել է ՀՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր ռադիոյի եւ հեռուստատեսության պետական կոմիտեում որպես ռադիոհաղորդավար
- 1961-1964 - ՀՍՍՀ Գիտությունների ակադեմիայի Արվեստի ինստիտուտի ասպիրանտ
- 1963-1968 - Համատեղությամբ ՀՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր ռադիոյի եւ հեռուստատեսության պետական կոմիտեում ռադիոհաղորդավար
- 1965 - ՀՍՍՀ Գիտությունների ակադեմիայի Գրականության եւ Լեզվի ինստիտուտների միացյալ գիտական խորհրդում պաշտպանել է թեկնածուական դիսերտացիա՝ «Մարտիրոս Մնակյան. կյանքը եւ բեմական գործունեությունը» թեմայով, եւ ստացել արվեստագիտության թեկնածուի գիտական աստիճան (դիպլոմ МИС N°000278)
- 1965-ից - Աշխատում է ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտում
- 1968-ից - Երբեւանի Գեղարվեստա-թատերական ինստիտուտում՝ հայ թատրոնի պատմության դասախոս
- 1970-1974 - Գեղարվեստա-թատերական ինստիտուտում դասախոս (բեմական խոսքի արվեստ, հայ թատրոնի պատմություն)
- 1972 - Ատեստավորվել է որպես ավագ գիտական աշխատող եւ ԽՍՀՄ Բարձրագույն որակավորման հանձնաժողովից (BAK) ստացել վկայագիր (MCH N°046694)

- 1973-ից - Հայկական սովետական հանրագիտարանի գիտաճյուղային խորհրդի անդամ
- 1973-1974 - Ռադիոհաղորդումների եւ հեռուստատեսության պետական կոմիտեում՝ հաղորդավարական բաժնի գեղարվեստական ղեկավար
- 1976-ից - ՀՍՍՀ Գիտությունների ակադեմիայի Արվեստի ինստիտուտի գիտական աստիճանաշնորհման մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար
- 1976-1979 - Երեւանի պետական համալսարանի հասարակական մասնագիտությունների ֆակուլտետում թատրոնի ընդհանուր պատմություն ամբարկայի դասախոս
- 1979 - Պարզեատրվել է ՀՍՍՀ Գիտությունների ակադեմիայի գովեստագրով (N°146, «Հայկական սովետական Սոցիալիստական Հանրապետության Գիտությունների ակադեմիան բարձր է գնահատում կատարած Ձեր գիտական աշխատանքը: ՀՍՍՀ Գիտությունների ակադեմիայի պրեզիդենտ՝ Վ. Համբարձումյան»):
- ՀՍՍՀ ԳԱ Արվեստի ինստիտուտի գիտական աստիճանաշնորհման մասնագիտական խորհրդում պաշտպանել է դոկտորական դիսերտացիա՝ «Թատրոնը միջնադարյան Հայաստանում» թեմայով
- 1980 - ԽՍՀՄ Բարձրագույն որակավորման հանձնաժողովից (BAK) ստացել է արվեստագիտության դոկտորի դիպլոմ (ՄԸ N°000034)
- Ընտրվել է ՀՍՍՀ ԳԱ Արվեստի ինստիտուտի գիտական խորհրդի անդամ
- 1980-1984 - Պրոֆեսորի պաշտոնակատար Երեւանի Գեղարվեստա-թատերական ինստիտուտի Արվեստի պատմության ամբիոնում: Դասախոսել է արեւմտաեվրոպական թատրոնի պատմություն, դրամայի տեսություն, հայ թատրոնի պատմություն, մասնագիտության ներածություն, թատերական քննադատություն, հռետորական արվեստի հիմունքներ:
- 1985 - Պետական կվալիֆիկացիոն հանձնաժողովի նախագահ՝ Երեւանի Գեղարվեստա-թատերական ինստիտուտում
- 1986-1991 - Պրոֆեսորի պաշտոնակատար Երեւանի Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում (թատրոնի ընդհանուր պատմություն)
- 1987 - ՀՍՍՀ Գիտությունների ակադեմիայի Արվեստի ինստիտուտում ատեստավորվել է որպես ամառաշատար գիտական աշխատող

- 1990-ից - Հայկական համառոտ հանրագիտարանի գիտական խորհրդատու՝ թատրոնի գծով
- 1990-1991 - Հայաստանի Հանրապետության Հեռուստատեսության եւ ռադիոյի պետական կոմիտեի նախագահ
- 1991-ից - ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտում ատեստավորվել է որպես գլխավոր մասնագետ
- 1992-ից - Երեւանի Եղիշե Չարենցի անվան Գրականության եւ արվեստի թանգարանի գիտական խորհրդի անդամ
- 1995-ից - ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի գիտական աստիճանաշնորհման մասնագիտական խորհրդի նախագահ
- 1995-2001 - Պրոֆեսորի պաշտոնակատար եւ գիտական խորհրդի անդամ Երեւանի Թատրոնի եւ կինոյի պետական ինստիտուտում (հայ թատրոնի պատմություն, արեւմտաեվրոպական թատրոնի պատմություն, մասնագիտության ներածություն, թատերական քննադատություն)
- 2001-ից - Հայաստանի Հանրապետության նախագահի հրամանով նշանակվել է Հանրային հեռուստառադիոընկերության խորհրդի անդամ
- 2003 - Հայաստանի Հանրապետության Բարձրագույն որակավորման հանձնաժողովից (ԲՈՀ) ստացել է պրոֆեսորի կոչում (դիպլոմ Պ 00158)
- 2003 - Շնորհիվ էլ Հայաստանի Հանրապետության գիտության վաստակավոր գործչի պատվավոր կոչում (00004)
- 2004-ից - ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտում Թատրոնի բաժնի վարիչ
- 2006-ից - Երեւանի Թատրոնի եւ կինոյի պետական ինստիտուտի թատերագիտության ամբիոնի պրոֆեսոր (հատուկ կուրս)

- Մարտիրոս Մնակյան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Ե., 1969, 262 էջ:
- Բենական խոսքի պոետիկան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Ե., 1973, 246 էջ:
- Թատրոնը միջնադարյան Հայաստանում. պատմության եւ տեսության հարցեր, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Ե., 1978, 352 էջ:
- Թատրոն. հին եւ նոր արժեքներ, «Սովետական գրող» հրատ., Ե., 1986, 294 էջ:
- Հայ հին դրաման եւ նրա պայմանաձեւերը, ՀՀ ԳԱԱ հրատ., Ե., 1990, 296 էջ:
- Հայ թատրոնի պատմություն. 19-րդ դար, «Նաիրի» հրատ., Ե., 1996, 547 էջ:
- Ալեքսանդր Պուշկին. բանաստեղծություններ եւ գծապատկերներ- թարգմանություն եւ առաջաբան, «Ակտուալ արվեստ» հրատ., Ե., 1999, 138 էջ:
- Դերասանի արվեստի բնույթը. էսթետիկական քննություն, «Սարգիս Խաչենց» հրատ., Ե., 2002, 366 էջ:
- Միջնադարյան բեմ. թատրոն-եկեղեցի հարաբերությունը միջնադարում, «Սարգիս Խաչենց» հրատ., Ե., 2004, 300 էջ:
- Թատրոն եւ թատերախոսություն, «Սարգիս Խաչենց» հրատ., Ե., 2004, 447 էջ:

- Մարտիրոս Մնակյան, «Տեղեկագիր հասարակական գիտությունների», 1963, №9, էջ 17-28:
- Մելիողրաման եւ Մարտիրոս Մնակյանը, «Տեղեկագիր հասարակական գիտությունների», 1964, №7, էջ 63-72:
- Матирос Мнакян и его творческая судьба, "Литературная Армения", 1964, №8, стр. 96-100.
- Մարտիրոս Մնակյանը եւ ռուս դասական կոմեդիան, «Պատմա-բանասիրական հանդես», 1965, №4, էջ 183-192:
- Ողբերգության՝ որպես գրական տեսակի ըմբռնումը Դիոնիսիոս Թրակացու հայ մեկնություններում, «Բանբեր մատենադարանի», №10, Ե., 1971, էջ 21-42:
- Բենական խոսքը եւ թատերայնության ու կերպարայնության սկզբունքները, «Սովետական արվեստ», 1973, №3, էջ 43-49:
